## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

## 15.01.2019 թվականին կնքված թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/02-1 համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան

29 հունվարի 2019թ.

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն /այսուհետ՝ կոմիտե/, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և «Ջի Էյ գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 15.01.2019 թվականին կնքված համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԱԳՊԿ-ԳՀԾՁԲ-19/02-1 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2019 թվականի դեկտեմբերի 20-ը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե | <ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց 7 | Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 4 թաղ., 34շ., բն.17 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900013220026 | Հ/Հ՝ 1570017535970100 |
| ՀՎՀՀ 02534328 | ՀՎՀՀ 00127455 |
| Գլխավոր քարտուղար՝ ________ Գ. Գրիգորյան | Տնօրեն՝________ Ա. Գալստյան |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված*
*15.01.2019թ. կնքված թիվ ՀՀ ԱԳՊԿ-ԳՀԾՁԲ-19/02-1*
*պայմանագրի թիվ 1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72511500/504 | Համակարգչի և օժանդակ սարքավորումների սպասարկման ծառայություններ | 2350000 | 3700000 | 5050000 | 6400000 | 7750000 | 9100000 | 10450000 | 11800000 | 13150000 | 14500000 | 15850000 | 16100000 | 16100000 |

**Պատվիրատու**

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար՝ ________ Գ. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կատարող**

<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 4 թաղ., 34շ., բն.17
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570017535970100
ՀՎՀՀ 00127455

Տնօրեն՝-------- Ա. Գալստյան
/ստորագրություն/

Կ.Տ